

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹՈՎԱՄԱՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՔԱՋԻԿԻ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02. «Դաստիարակության և դասավանդման մեթոդիկա»
(աշխարհագրություն) մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա.Գ. Աջաճողյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ա.Սահակյան**

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա. Ա.Մինասյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. սեպտեմբերի 25-ին ժամը 12 -ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. օգոստոսի 25 -ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ա.Հ. ՍՎԱՅՍԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Երրորդ հազարամյակի սկզբում երկիր մոլորակը կանգնած է վերահաս էկոլոգիական աղետի առջև:

Այդ տեսանկյունից՝ էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների շարունակական աճման պայմաններում, երկիր մոլորակի կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրը արդիական հնչեղություն է ձեռք բերում՝ դառնալով համայն մարդկության մտահոգության առարկան: Գնալով աճում է մարդածին և տեխնածին գործոնների, անապատացման և գլոբալ աղտոտման գործընթացների ազդեցությունը շրջակա բնական միջավայրի վրա: Միևնույն ժամանակ քաղաքների կառուցման համար հատվում են անտառներ, ոչնչացվում են տարածքներ, որի արդյունքում կրճատվում է կենսոլորտի կենսաբազմազանությունը: Խիստ դժվար է ընթանում մաքուր տեխնոլոգիաների կիրառման գործընթացը արտադրության մեջ: ՄԱԿ-ի հիմնական փաստաթղթերից մեկում՝ «21-րդ դարի օրակարգում» /Ռիո-դեժանեյրո, 1992թ./ նշվում է, որ մարդկությունն ապրում է իր պատմության վճռական պահը: Մենք բախվում ենք ինչպես պետությունների, այնպես էլ առանձին պետությունների շրջանակներում դարակազմիկ անհամամասնությունների հիմնախնդիրներին՝ չքավորության, սովի, բնակչության առողջության ու անգորագիտության և էկոհամակարգերի վիճակի շարունակվող վատացման սրվող հիմնախնդիրների, որոնցից կախված է մեր բարեկեցությունը:

Դրանցում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները, որոնց լուծման գործում ուրույն դեր է վերապահվում մարդուն: Մարդու գործունեությունը հանգեցրել է բնության հետ փոխադարձ կապերի լուրջ, հաճախ անվերադարձ խաթարումների, ձևավորվել են բնապահպանական հիմնախնդիրներ, որոնց լուծմանն են ուղղորդված միջազգային հանրության ջանքերը: Այդ մասին են վկայում ՄԱԿ-ի «Ռիո +20» կայուն զարգացման գազաթափողվի արդյունքները: Գազաթափողվին բոլոր երկրները նորից հայտարարեցին կայուն զարգացմանը հասնելու նպատակին իրենց նվիրվածության մասին և խոստացան աջակցել տնտեսական, սոցիալական, բնապահպանական կայուն ապագա ստեղծելուն մեր մոլորակի և ներկա ու ապագա սերունդների համար:

Այս գործընթացից անմասն չեն կարող մնալ կրթական համակարգերը, հատկապես աճող սերնդի կողմից բնության և կենդանի օրգանիզմների մասին գիտելիքների ձեռք բերման, էկոլոգիական իրավիճակների գնահատման, բնապահպանական կարողությունների ու հմտությունների, արժեքային համակարգի ձևավորման և այդպիսով շրջակա միջավայրի հետ ներդաշնակ կեցության առաքելության ստանձման առումով:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում ընթանում են քաղաքակենտրոնացման,

քաղաքաշինության, լանդշաֆտների փոփոխության գործընթացներ, որոնք ծնունդ են նորանոր բնապահպանական խնդիրներ: Ուստի և հանրակրթության կարևորագույն խնդիրներից է սովորողներին քաղաքային բնակավայրերի, դրանց բնապահպանական խնդիրների վերաբերյալ գիտելիքներ հաղորդել և նրանց դաստիարակել որպես էկոլոգիապես բարենպաստ միջավայրի բնապահպանությամբ շահագրգիռ, կոմպետենտ, պատասխանատու վերաբերմունք ունեցող և էկոլոգիական մշակույթ կրող քաղաքացիներ: Քաղաքային բնակավայրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշ չափով կանխատեսել երկիր մոլորակի ապագան. ըստ կանխատեսումների՝ մոտ ապագայում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները հավակնում են դառնալու ամբողջ մարդկության համար նշանակալի գլոբալ հիմնախնդիր, որին կբախվի հողագնդի յուրաքանչյուր բնակիչ: Արդի կրթական բարեփոխումների համատեքստում այդ հիմնախնդիրների ուսումնասիրումը՝ պետք է դիտարկվի որպես հասարակության սոցիալական պատվեր, որպես ազգային և գլոբալ մակարդակի կրթական քաղաքականության գերակա խնդիր, որը կարող է արդյունավետորեն լուծվել էկոլոգիական կրթության շրջանակներում:

Քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական տեղաշարժերի արդի պայմաններում աճում է կրթության բովանդակության մեջ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների շեշտադրման անհրաժեշտությունը, որը սոցիալ-էկոլոգիական, սոցիալ-իրավական նշանակություն ունի և նպաստում է անձի սոցիալականացմանը:

Ելնելով վերոբերյալից՝ մենք կարծում ենք, որ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը ավագ դպրոցում անհրաժեշտ է, իսկ դրա արդյունավետությունը պայմանավորված է համարժեք մեթոդիկայի մշակմամբ:

Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման նպատակային կողմնորոշումները բխում են էկոլոգիական կրթության ընդհանուր նպատակներից /Ա.Ն.Ջախլեբնի, Ի.Տ.Սուրավեգինա, Ի.Դ.Ջվերև, Լ.Թ.Ասատրյան, Յ.Մ.Ազիզյան, Յ.Գ.Դերձյան, Մ.Ա.Ասատրյան, Ա.Գ.Աջամովյան, և այլք/, կայուն զարգացման դրույթներից /Կ.Դանիելյան, Յ.Սարգսյան, Լ.Վալեսյան, Ս.Բալոյան և այլք/ և անձի էկոլոգիական մշակույթի ձևավորման ընդհանուր խնդիրներից /Գլազաչև Ի.Ն., Պլեչովա Ջ.Ն., Պոստովիտ Ն.Ա., Ստոչկուս Կ., Մարուխյան Ռ., Յովսեփյան Ա. և այլք/:

Էկոլոգիական կրթության տարածաշրջանային համակարգի կառուցման և իրականացման մեթոդական տեսանկյունները բացահայտված են Տ.Ա.Բաբակովայի, Ն.Ֆ.Վինոկուրովայի. Լ.Վ.Մոխեսևայի և այլոց կողմից: Էկոլոգիական կրթության մեջ տարածաշրջանային մոտեցումը դիտարկվում է որպես դիդակտիկական առանձնահատուկ սկզբունք, որը թույլ է տալիս ուշադրությունը շեշտադրել քաղաքի և տարածաշրջանի մշակութային, բնական

և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վրա՝ դրանց հաղորդելով համամարդկային հնչեղություն: Այնուհանդերձ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված գիտամեթոդական հետազոտությունները հիմնականում վերաբերում են քաղաքակենտրոնացման խնդիրներին և քաղաքային բնակավայրերի բնապահպանական մոնիթորինգին: Ուստի քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը ավագ դպրոցում արդիական է և անհրաժեշտ:

Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում մեր բազմամյա ուսումնասիրությունները, դիտումները, զրույցները, հարցումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում քաղաքների բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների գիտելիքները համակարգված չեն, բավականաչափ ձևավորված չեն շրջակա սոցիալ-մշակութային, բնական միջավայրի նկատմամբ արժեքային պատկերացումները: Ուսումնամեթոդական և մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքի էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքներն առկա են ուսումնական տարբեր դասընթացներում կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն, էկոլոգիա, սակայն դրանք բացահայտում են միայն քաղաքային բնակավայրի ձևավորման պատմության, աշխարհագրական, տնտեսական վիճակի, տարածքային աճի խնդիրներին և լիովին չեն արտացոլում ներկա բնապահպանական հիմնախնդիրները:

Փիլիսոփայական, էկոլոգիական, սոցիոլոգիական, հոգեբանամանկավարժական գրականության շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի, առկա բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի և պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արդի ժամանակաշրջանում քաղաքի՝ որպես մարդկության մեծամասնության հիմնական բնակավայրի ուսումնասիրումը արդիական հնչեղություն ունի:

Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում արված դիտարկումների և վերլուծությունների արդյունքում մեր կողմից բացահայտվեցին մի շարք հակասություններ՝

- աճող սերնդին քաղաքային բնակավայրերում բնականոն կենսագործունեությանը նախապատրաստության , բնապահպանական հիմնախնդիրների լուծման կարողությունների զարգացման անհրաժեշտության գիտակցման և կրթության բնագավառում քաղաքի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերի, մեթոդիկայի ոչ բավարար մշակվածության միջև,

- քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության նկատմամբ առկա գիտելիքակենտրոն մոտեցման, սովորողների գնահատողական, հետազոտական, ստեղծագործական, պրակտիկ գործունեության համադրման և մարդու էկոկենտրոն գիտակցության դրսևորման անհրաժեշտության միջև:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է քաղաքային բնակավայրերի բնապահպանության՝ որպես էկոլոգիական ընդհանուր կրթության տարածաշրջանային բաղադրատարրի տեսական հիմնավորմամբ ու մեթոդիկայի մշակմամբ՝ մարդաէկոկենսոտոն մոտեցման և բնագիտական գիտելիքների համադրման միջոցով:

Հետազոտության հիմնախնդրի արդիականությունը նախանշեց մեր հետազոտության թեման՝ «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդիկան ավագ դպրոցում»:

Հետազոտության նպատակն է մշակել և փորձարարությամբ հիմնավորել ավագ դպրոցի բնագիտական հոսքում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդիկան:

Հետազոտության օբյեկտը ավագ դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման գործընթացն է:

Հետազոտության առարկան քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդական է ավագ դպրոցի բնագիտական հոսքում:

Հետազոտության գիտական վարկածը: Ավագ դպրոցի բնագիտական հոսքում քաղաքային բնակավայրերի բնապահպանության հիմնախնդիրների ուսումնասիրումն արդյունավետ կիրականանա եթե՝

1. Բացահայտվեն, ուսումնասիրվեն և համակարգվեն քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:
2. Մշակվի և ավագ դպրոցի ուսուցման գործընթացում ներդրվի «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագիրը:
3. «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրային նյութը մշակվի՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները:
4. Մշակվի և ավագ դպրոցներում փորձարկվի «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման արդյունավետ մեթոդիկա:
5. Առաջադրվեն «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմաններ:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական, մանկավարժական և մեթոդական գրականությունը և տեսականորեն հիմնավորվել ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման գաղափարը՝ որպես էկոլոգիական կրթության բաղադրատարր:

2. Մշակել և ավագ դպրոցների բնագիտական հոսքերում փորձարկել «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրային նյութը:

3. Մշակել և փորձարարությամբ հիմնավորել «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման արդյունավետ մեթոդիկան:

4. Որոշարկել և առաջադրել «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել էկոլոգիական ընդհանուր կրթության տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանամանկավարժական, բնագիտական, մարդասիրական, արժեքանական, կայուն զարգացման հայեցակարգերը:

Հետազոտության հիմքում ընկած են՝

- կայուն զարգացման և քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված տեսությունները /Կ.Դանիելյան/ :
- անձնակենտրոն ուսուցման փիլիսոփայական և մեթոդաբանական հիմքը կազմող զարգացնող ուսուցման տեսությունը, համագործակցային, փոխներգործուն, կոլեկտիվ ուսուցման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումները (Կ. Ռոջերս, Դ. Ջոնսոն, Ռ. Ջոնսոն, Պ. Սահլբերգ, Մ.Մ.Սկրտչյան և այլք/
- էկոլոգիական ընդհանուր կրթության հիմնական դրույթները, էկոլոգիական մշակույթի ձևավորման վերաբերյալ գաղափարները (Ա.Դ. Ուրսուլ, Վ.Լ. Գլազիչև, Բ.Տ. Լիխաչյով, Ի.Դ. Սուրավեզինա, Լ.Թ.Ասատրյան), հանրակրթական դպրոցում բնագիտական առարկաների ուսումնասիրությանը նվիրված մեթոդաբանական մոտեցումներն ու գաղափարները (Տ.Վ. Թանգամյան, Յ.Յ.Դերձյան, Ս.Վ. Ալեքսև, Տ.Ա. Բաբակովա, Օ.Ն. Պոնոմարյովա, և այլք),
- սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրությունները (Ի.Ա. Կոն, Լ.Ի. Բոժովիչ և այլք):

Հետազոտության մեթոդները: Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են մանկավարժահոգեբանական հետազոտության տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները՝

- դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ գիտական աղբյուրների՝ փիլիսոփայական, բնագիտական, հոգեբանամանկավարժական ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ժամանակակից տեսությունների, ուսումնական ծրագրերի վերլուծություն, արդյունքների համադրման տրամաբանական և պատմահամեմատական մեթոդներ,
- ուղղակի և անուղղակի դիտում, անկետավորում, թեստավորում,

հարցազրույց, մանկավարժական փորձարարություն՝ հաստատող և ձևավորող փուլերով, հետազոտության արդյունքների վերլուծության մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ,

- «Քաղաքային բնակավայրերի բնապահպանություն» դասընթացի ծրագրի ներդրման մեթոդիկայի փորձաքննություն:

Հետազոտության բազա են հանդիսացել

Գյումրու «Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ-ը, Գյումրու թիվ 37-րդ ավագ դպրոցը, Վանաձորի «Էվրիկա» վարժարանը, Երևան քաղաքի թիվ 16 դպրոցը:

Տեսական և փորձարարական հետազոտությունն անցկացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2009 -2010 թթ.) անցկացվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության, արդի հայեցակարգերի, տեսությունների, քաղաքային բնակավայրերի բնապահպանության վերաբերյալ գիտամանկավարժական փորձի ուսումնասիրում և վերլուծություն, որոշվել են հետազոտության առարկան, խնդիրները, մեթոդները, մշակվել են դասընթացի ծրագիրը, հետազոտության անցկացման մեթոդները, ընտրվել է հետազոտության բազան:

Երկրորդ փուլը (2010-2011թթ.) տեսական-փորձարարական է. ընդհանրացվել է կուտակված տեսական և էմպիրիկ նյութը, ձևակերպվել են հետազոտության հիմնադրույթները, ճշգրտվել են ավանդական և ոչ ավանդական տեխնոլոգիաների արդյունավետ համադրման հնարավորությունները, ձևավորվել են հետազոտության իրականացման ստուգողական և փորձարարական խմբերը, իրականացել է հաստատող փորձարարական աշխատանքները, փորձաքննության է դրվել «Քաղաքային բնակավայրի բնապահպանություն» ուսումնական դասընթացի ծրագիրը:

Երրորդ փուլում (2011-2012թթ.) անցկացվել է ձևավորող փորձարարությունը, ստուգվել է դասընթացի ուսումնասիրման արդյունավետությունը, ընդհանրացվել, համակարգվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, կանխորոշվել են հետազոտության հիմնախնդրի հետագա մշակումների ուղղություններն ու տեսանկյունները:

Հետազոտության գիտական նորույթ.

- Բացահայտվել են քաղաքային բնակավայրերի բնապահպանության վերաբերվող հիմնական հասկացությունների՝ «էկոլոգիական գիտակցություն», «քաղաքի էկոլոգիական մշակույթ», «չափավորության մշակույթ», «Երկրահիգիենա», «Սոցիալական հիգիենա» էությունը:
- Բացահայտվել և բնութագրվել են ՀՀ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների առանձնահատկությունները՝
 - շրջակա միջավայրի հետ քաղաքային բնակչության փոխգործակցության տարածաշրջանային ավանդույթները,
 - քաղաքի բնակլիմայական պայմանների, էկոհամակարգերի, լանդշաֆտի

յուրահատկությունները,

- քաղաքակենտրոնացման, քաղաքաշինության, ընդհանուր արդյունաբերության, տրանսպորտաճանապարհային նկարագիրը:

- Մշակվել և փորձարարությամբ հիմնավորվել է «Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագիրը ավագ դպրոցի բնագիտական հոսքի դպրոցական բաղադրիչում որպես ընտրովի դասընթաց ուսումնասիրելու համար:
- Մշակվել է և փորձարարությամբ հիմնավորվել է «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման արդյունավետ մեթոդիկա, որը ընդգրկում է դասընթացի թեմատիկան, ուսումնասիրման մեթոդները, միջոցները, ձևերը և ընթացակարգերը:
- Առաջադրվել են «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունն ապահովման մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը

- Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել են ավագ դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման տեսական-մեթոդաբանական հիմքերը:
- Տեսականորեն հիմնավորվել է քաղաքային բնակավայրերի բնապահպանության ուսումնասիրման անհրաժեշտությունը, որը բխում է նոր հազարամյակում հասարակության սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, մշակութային տեղաշարժերից և արտացոլում է մարդկության զարգացման հիմնական միտումներն ու գերակայությունները:
- Հետազոտության նյութերը կհարստացնեն էկոլոգիական կրթության տեսությունը և պրակտիկան:

Հետազոտության գործնական նշանակությունը

- Մշակված «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրային նյութը կարող է ընդգրկվել ավագ դպրոցի բնագիտական հոսքի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչում որպես ընտրովի դասընթաց:
- Հետազոտության արդյունքները և ուսումնական նյութերը կարող են օգտագործվել ուսուցիչների մասնագիտական պատրաստության և որակավորման բարձրացման ծրագրերում, թեմատիկ մշակումներում, էկոլոգիական բովանդակությամբ ուսումնական տարբեր ծրագրերում և մեթոդական հանձնարարականներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները**.

1. Ավագ դպրոցի բնագիտական հոսքում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման անհրաժեշտության հիմնավորումը՝ որպես էկոլոգիական կրթության կարևորագույն բաղադրատարր:

2. «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի մեր կողմից մշակված ծրագիրը, որը նախատեսվում է ավագ դպրոցի բնագիտական հոսքում ուսումնասիրելու համար՝ որպես դպրոցական բաղադրիչի առարկա. դասընթացի ծրագրային նյութը և ուսումնամեթոդական համալիրը կառուցվել է՝ հաշվի առնելով ինտեգրվող առարկաների համապատասխան բովանդակությունը և տարածաշրջանային յուրահատկությունները:

3. Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման անհրաժեշտությունը բխում է ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշումների, բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման և ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման խնդիրներից և համահունչ է արդի հասարակության շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ունեցող քաղաքացիներ դաստիարակելու պահանջների իրականացմանը:

4. Ավագ դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդիկան, որը ներառում է դասընթացի ծրագրային նյութը, դրա իրացման մեթոդները, կազմակերպման ձևերը, միջոցները և ընթացակարգը: Այն ապահովում է գործընթացի արդյունավետությունը, տեսական և գործնական նյութերի տրամաբանական զուգորդումը, դպրոցականների բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ դպրոցականների գիտելիքների լիարժեք յուրացումը, բնապահպանական, ուսումնահետազոտական, կարողությունների զարգացումը և էկոլոգիական մշակույթի ձևավորումը:

5. «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ուսումնասիրման գործընթացի արդյունավետության ապահովման մանկավարժական պայմանները:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորում են բնագիտական առարկաների ուսուցման, էկոլոգիական կրթության բնագավառում առկա հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության, մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության գիտատեսական բազայով, հետազոտության նպատակներին, առարկային ու խնդիրներին համարժեք ընտրված մեթոդներով, տեսական դրույթների փորձարարական հիմնավորմամբ, հիմնավորված եզրակացություններով:

Հետազոտության փորձաքննությունը իրականացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության և աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի էկոլոգիայի ամբիոնի նիստում, հետազոտության բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ատենախոսության թեմայի վերաբերյալ իրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 154 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման տեսական-մեթոդաբանական հիմքերը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման անհրաժեշտության հիմնավորումը»**, նշվում է, որ նոր հազարամյակում համաժողովրդակային հիմնախնդիրների թվում առավել արդիական հնչեղություն են ձեռք բերում քաղաքի բնապահպանական խնդիրները: Երկիր մոլորակի գլոբալ հիմնախնդիրները, սպառնացող էկոլոգիական ճգնաժամը ստիպեցին բոլոր երկրներին միասնաբար քննարկելու դրանք (ՄԱԿ-ի մակարդակով կազմակերպված համաժողովներում 1972թ. Ստոկհոլմ, 1992թ. Ռիո-դե-ժանեյրո, 2002թ. Յոհաննեսբուրգ, 2012թ. Ռիո-դե-ժանեյրո):

Այդ ուղղությամբ ՀՀ-ում մշակվել են մի շարք համալիր ծրագրեր, որոնք նպատակաուղղված են շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, մարդու իրավունքների, կենսաբազմազանության և այլ ոլորտների վերաբերյալ միջազգային Կոնվենցիաների իրականացմանը:

Դիտարկված են քաղաքին, նրա բնապահպանական հիմնախնդիրներին վերաբերող տեսական և հայեցակարգային մոտեցումները: Հիմնավորվում է, որ ժամանակակից աշխարհում քաղաքակենտրոնացման գլոբալ աճի համեմատ աճում է քաղաքի, այդ միջավայրում բնակվող մարդու, այլ օրգանիզմների՝ կենդանիների, բույսերի էկոլոգիայի, քաղաքի էկոհամակարգերի վերաբերյալ գիտելիքների նշանակությունը: Էկոլոգիական կրթության տեսության և մեթոդաբանության առջև ծառացել է քաղաքի բնապահպանության վերաբերյալ հիմնական հասկացությունների, առանցքային գաղափարների, գերակա ուղղությունների և արմատական լուծումների շեշտադրման և արդիականացման անհրաժեշտությունը: Բնութագրված են ՀՀ քաղաքային բնակավայրերի ժամանակակից հիմնախնդիրները:

Երկրորդ ենթագլխում՝ **«ՀՀ քաղաքային բնակավայրերի ձևավորման գործոնները և բնապահպանական հիմնախնդիրների առանձնահատկությունները»** դիտարկված են քաղաքային բնակավայրերի, դրանց բնապահպանական հիմնախնդիրների ձևավորման վերաբերյալ հայեցակարգային գաղափարները, հետազոտությունները, որոնք բացահայտում են քաղաքային փոփոխվող պայմաններում մարդու ընդհանուր համարվողական հնարավորությունները:

Վերլուծված են քաղաքային բնակավայրի բնապահպանության վերաբերյալ գիտական գիտելիքների համակարգը: Ներկայացված են քաղաքային բնակավայրի բնապահպանական վիճակի ուսումնասիրման ուղղությունները: Վերլուծելով քաղաքային բնակավայրում ձևավորվող էկոլոգիական, բնապահպանական և սոցիալական հիմնախնդիրները, առանձնաց-

վել են այն համակարգային գիտելիքները, որոնք սովորողները պետք է ձեռք բերեն այդ հիմնախնդիրները խորությամբ հետազոտելու և լուծելու համար:

Ներկայացված են քաղաքային բնակավայրերի ձևավորման գործոնները և բնապահպանական հիմնախնդիրների առանձնահատկությունները:

Երրորդ՝ **«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մանկավարժական հիմնավորումը»**, խորագրով ենթազխում ներկայացված է էկոլոգիական ընդհանուր կրթության շրջանակներում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Դա հիմնավորվում է մանկավարժական այն օրինաչափություններով, որոնք արտացոլում են հասարակության պահանջմունքի, նրա սոցիալական պատվերի և այդ պատվերի իրականացման միջև փոխադարձ կայուն կապերը: Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը նպատակաուղղված է քաղաքի սոցիալ-բնական միջավայրի, այդ միջավայրում մարդու առողջության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը, անձի ու հասարակության, հասարակության և միջավայրի, անձնականի և հասարակականի փոխադարձ կապերի ներդաշնակեցմանը: Նպատակները սահմանելիս հաշվի են առնվում արժեքանական հետևյալ մոտեցումները՝ հուզական, հոգևոր-բարոյական, արժեքային-գնահատողական, արժեքային-գործնական:

Այդ համատեքստում դիտարկվում է էկոլոգիական կրթության բովանդակությունը, որի բաղադրչն է կազմում նաև քաղաքային բնակավայրի բնապահպանական խնդիրները, դրա առանձնահատկությունները և իրականացման փուլերը և սովորողների գիտելիքներին, կարողություններին ներկայացվող պահանջները:

Չորրորդ ենթազխում **«Ավագ դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման գիտատեսական հիմունքները»** նշվում է, որ հանրակրթական դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը դիտարկվում է էկոլոգիական ընդհանուր կրթության համատեքստում՝ որպես տարածաշրջանային բաղադրատարր: Գիտամեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնագետների ուշադրության կենտրոնում են էկոլոգիական կրթության տարածաշրջանային բովանդակության ձևավորման հարցերի վրա: Հատկապես շեշտադրվում են տարածաշրջանային էկոլոգիական կրթության բովանդակության մեջ գլոբալ և տարածաշրջանային գործոնների հարաբերակցության, միջառարկայական կապերի ինտեգրման, էկոլոգիական կրթության տարածաշրջանային բաղադրատարրի մեթոդական տեսանկյունների մշակման խնդիրները:

Այս մոտեցման հիման վրա մեր կողմից մշակված դասընթացի ծրագրային նյութի ուսումնասիրման մեթոդական համալիրը կարող է հիմք հանդիսանալ ավագ դպրոցի բնագիտության տարբերակված հոսքում քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության համար:

Հիմնավորված է, որ չնայած թեմայի ակնհայտ արդիականությանը, քաղաքային բնակավայրերում բնապահպանական հիմնախնդիրների ակնառու դրսևորմանը և հանրակրթական դպրոցի հոսքային դասարաններում դասընթացի ուսումնասիրման անհրաժեշտությանը՝ դեռևս բավարար չափով չկան այդ հարցին նվիրված հետազոտություններ և մեթոդական մշակումներ: Մանկա-

վարժության տեսության մեջ և դպրոցական պրակտիկայում քաղաքի էկոլոգիայի գիտելիքների յուրացման և դրանց գործնականում կիրառման ուղղությամբ մեր վերլուծություններում հենվել ենք տարրական, հիմնական և ավագ դպրոցի առարկայական ծրագրերի և ուսումնամեթոդական ձեռնարկների վրա:

Դիտարկված են էկոլոգիայի վերաբերյալ տարբեր դասընթացներում քաղաքի էկոլոգիային վերաբերող հիմնական բաժինները, որոնցում ընդգրկված թեմաները սովորողներին բավականաչափ խոր պատկերացումներ են տալիս օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունների, բնապահպանական հիմնախնդիրների, կենսոլորտի վրա մարդկային գործունեության ազդեցության երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին և նպաստում են քաղաքային բնակավայրի բնապահպանության վերաբերյալ գիտելիքների, բնապահպանական մշակույթի, էկոլոգիական գիտակցության և վարքի, էկոլոգիական արժեհամակարգի ձևավորմանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդիկայի հիմնավորումը»**, բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում **«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մանկավարժական պայմանները»**, դիտարկված և բնութագրված են ավագ դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Մեր հետազոտության մեջ հիմնվել ենք այն դրույթների վրա, որ պատմական տարիքում էական են անձի դրդապատճառային ոլորտի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը և դրանց ազդեցությունը իմացական գործունեության, ինքնագիտակցության ու բարոյական համոզմունքների վրա:

Հիմնավորվել է, որ քաղաքային բնակավայրերի էկոլոգիական հիմնախնդիրների ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական մի շարք պայմանների ապահովմամբ: Բնութագրված են այդ մանկավարժական պայմանները:

Ներկայացված են «Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրային թեմատիկան, բովանդակությունը և դրա առանցքը կազմող իմացական, դրդապատճառային-արժեքային, վարքային-գործունային բաղադրատարրերը:

Առավել ընդգրկում դիտարկվել են «քաղաքի էկոհամակարգ», «միջավայրի գործոններ», «քաղաքակենտրոնացում», «երկրահիգիենա» և այլ հասկացությունները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Ավագ դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդական ապահովումը»** նշվում է, որ քաղաքային բնակավայրի ուսումնասիրության արդյունավետությունը կախված է սովորողների արժեքային կողմնորոշումներից, կենսական նպատակներից և ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգի կիրառումից: Այդ մեթոդիկան ընդգրկում է դասընթացի ծրագրային նյութի, սկզբունքը, մեթոդները, միջոցներն ու ձևերը: Դրանում նախատեսված են ուսումնական աշխատանքի կազմակերպման ինովացիոն ձևեր ու մեթոդներ. հատկապես արդյունավետ են բանավեճերը, քննարկումները, թիմային

նախագծերը, անհատական և խմբային հետազոտությունները, պրոբլեմային իրավիճակները, գործնական խաղերը:

Ընտրված մեթոդներն իրականացնում են խթանող, կազմակերպական և վերահսկողական գործառնություններ: Մեթոդների ընտրությունը համապատասխանում է ուսումնական ընդհանուր նպատակներին, ժամանակակից հասարակության պահանջներին, սոցիալ-ժողովրդագրական տեղաշարժերին, ինչպես նաև հանրակրթության բարեփոխման ընդհանուր դրույթներին:

Դասընթացի ուսումնասիրության ընթացքում առանձնակի կարևորվել են փոխներգործումը, համագործակցային, նախագծերի մեթոդների կիրառման արդյունավետությունը հետազոտվող գործընթացում:

Փոխներգործումն մեթոդները՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության, երկխոսության և սովորողների ազատության վրա, զարգացնում են սովորողների ինչպես մտավոր կարողությունները, այնպես էլ հուզական աշխարհը և գիտելիքների ձեռքբերման բուն գործընթացը:

Հիմնավորվում է, որ համագործակցային ուսուցումը՝ որպես ուսուցման արդյունավետությունը բարձրացնող մանկավարժական տեխնոլոգիա, ապահովում է խմբային աշխատանքի առավել բարձր մակարդակ, սովորողների մեջ ձևավորում է խմբային աշխատանքի մշակույթ:

Ներկայացված են մեր կողմից մշակված համագործակցային փոքր խմբերով աշխատանքի կազմակերպման և նյութի յուրացման մի քանի մոդելներ՝ հետազոտական նախագծի իրականացման, ստուգիչ հարցերի ու առաջադրանքները քարտերի կամ հարցաթերթիկների ձևով կիրառման:

Բնութագրված են այդ մոդելների կիրառման ընթացակարգերը և փուլերը: Ներկայացված են նաև հետազոտության շրջանակներում համագործակցային ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ՝ դերային խաղեր, խճանկար և այլն:

Ներկայացված և բնութագրված են ուսումնադաստիարակչական գործընթացի երեք մակարդակները, որոնցից յուրաքանչյուրում լուծվում են կրթական որոշակի խնդիրներ:

Երրորդ ենթագլխում՝ **«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրի մշակման սկզբունքները և ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները**», բնութագրված են դասընթացի նյութերի ընտրության հիմնական սկզբունքները: Ներկայացված են դասընթացի թեմատիկ պլանավորման մոտիվները, մեր կողմից անցկացված դասերի մոտիվները և դրանց իրականացման մեթոդները: Դասընթացի գործնական մասն ուղղված է քաղաքի սոցիալ-բնական միջավայրի, դրանում առկա բնապահպանական հիմնախնդիրների, քաղաքային էկոհամակարգերի և որպես մոդելային օբյեկտներ ընտրված կենսաերկրագնդների ուսումնասիրությանը: Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ առաջադրանքները կազմվել են ըստ ուսուցման նպատակների:

Ընդհանուր առմամբ մենք մշակել ենք չորս խումբ առաջադրանքներ՝ ըստ գործունեության նպատակների և համառոտ բովանդակության:

Զորորդ ենթագլխում՝ **« Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը**», ներկայացված է դասընթացի ծրագրային նյութի ուսումնասիրման մեթոդիկայի փորձարարական հիմնավորման փուլերը:

Բնութագրված են մշակված մեթոդիկայի կիրառման արդյունքում ծրագրային նյութի ուսումնասիրման ընթացքում գիտելիքների յուրացման հիմնական չափանիշները: Այդ չափանիշների համապատասխանությունը ստուգելու համար օգտագործվել են էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ դիտում տարբեր իրավիճակներում, գրույց, էքսկուրսիաներ, բնության մեջ դպրոցականների ուսումնառնական գործունեության արդյունքների ուսումնասիրում, օրագրերի վարում, թեստավորում և այլն:

Հաստատող փորձարարության ընթացքում դպրոցականների գիտելիքների ծավալն ու համակարգվածությունն ուսումնասիրվել է դասընթացի առանցքային հասկացությունների յուրացման, կիրառման, էկոլոգիական օրինաչափությունների գիտակցման մակարդակի ստուգմամբ:

Վերլուծված են հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում սովորողների գիտելիքների ձևավորվածության և ընդհանրացման կարողությունների ստուգման համար տրված առաջադրանքների արդյունքները:

Պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցականների մեծամասնությունը փորձարարական աշխատանքների սկզբում կայուն գիտելիքներ ունի քաղաքային էկոհամակարգերի վերաբերյալ, սակայն դժվարությամբ է առանձնացնում հիմնական տարբերիչ հատկանիշները, բնապահպանական հիմնախնդիրները: Փորձարարության վերջում փորձարարական խմբերում ընդգրկվածները բավականաչափ հիմնավորված և հստակ թվարկում են քաղաքային էկոհամակարգերի տարբերիչ հատկանիշները, բացահայտում են քաղաքային էկոհամակարգերի կապը քաղաքային միջավայրի, բնապահպանական հիմնախնդիրների, հատկապես մարդածին գործոնների հետ:


«Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի կարևոր խնդիրներից է դիտարկվող ոլորտում ավագ դպրոցականների հետազոտական և գնահատողական կարողությունների ձևավորումը: Փորձարարության ընթացքում մենք արձանագրել ենք ավագների գիտելիքների և հետազոտական կարողությունների աճ հատկապես փորձարարական խմբերում:

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցվածների մեծամասնությունն ունի գիտական և գիտահանրամատչելի գրականությամբ աշխատելու, նաև տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու կարողություններ: Ուսումնական արդյունքներն ավելի բարձր են, եթե տեսական գիտելիքները գործնականում կիրառվում են տարբեր առաջադրանքների, ուսումնառնական գործունեության նախագծերի, գործնական խաղերի, էքսկուրսիաների, քաղաքի կանաչ գոտիներում, բնության մեջ տարբեր օբյեկտների ուսումնասիրության ժամանակ:

Սովորողների կողմից ուսումնական դասընթացի բովանդակության յուրացման ցուցիչ են նյութի իմացությունը (գիտենալ), ընկալումը (կարողանալ բացատրել), կիրառումը: Որպես գիտելիքների յուրացման չափանիշներ են ընտրվել յուրացված գիտելիքների ծավալը, խորությունը, համակարգվածությունը, գիտակցված յուրացումն ու գործնականում կիրառումը:

Ուսումնական պարամետրներից, գործնական և լաբորատոր աշխատանքների, տարբեր առաջադրանքների կատարում, քննարկումների ընթացքում պարզել ենք, որ փորձարարական խմբերում գիտելիքների յուրացման վերարտադրողական (ցածր) մակարդակում են սովորողների 14%-ը,

միջին մակարդակում՝ 55%-ը, համակարգվածության և գիտակցականության բարձր մակարդակում են 31% սովորողներ: Ստուգողական խմբերում տվյալները համապատասխանաբար կազմում են 21% (ցածր), 51% (միջին), 28% (բարձր) (վերը նշված թվային տվյալները ներկայացված են թիվ 1 գծանկարում): Ավագ դպրոցի տարբերակված հոսքային դասարաններում գիտելիքների ընկալման և կիրառման միջին և բարձր մակարդակների գերակշռությունը պայմանավորված է դպրոցականների մասնագիտական կողմնորոշումների հստակ արտահայտվածությամբ և շրջակա միջավայրի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման ձևավորվածությամբ:



Գծանկար 1. Բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների գիտելիքների յուրացման մակարդակները

Մեր բազմամյա դիտումների, վերլուծությունների արդյունքում բացահայտվել են քաղաքային բնակավայրի և նրանում առկա բնապահպանական հիմնախնդիրների նկատմամբ վերաբերմունքի դրսևորման մակարդակները:

Նշված վերաբերմունքի դրսևորման մակարդակները դիտարկվել են փորձարարության սկզբում և վերջում փորձարարական և ստուգողական խմբերում 200 հարցվածների նկատմամբ՝ արձանագրելու համար մշակված մեթոդիկայի և ապահովված մանկավարժական պայմանների արդյունավետության դիմամիկան, որն ակնկալվել է մեր կողմից կիրառված մանկավարժական մեթոդության արդյունքում (արդյունքներն արտացոլված են աղյուսակներում և գծապատկերներում):

Փորձարարական խմբերում արդյունավետությունն ակնհայտ է, քանի որ կիրառվել են ամձնակենտրոն մոտեցում, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, գործնական առաջադրանքներ, ուսումնահետազոտական նախագծեր, դիտումներ են իրականացել քաղաքային միջավայրում, անցկացվել են զրույցներ բնապահպանական հիմնախնդիրների շուրջ, կուտակվել և մշակվել է մեծածավալ տեղեկատվություն:

Փորձարարական աշխատանքների արդյունքները վկայում են, որ մեր կողմից մշակված «Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրային նյութը, դրա ուսումնասիրման մեթոդիկան մպաստում են քաղաքային բնակավայրերի բնապահպանական

հիմնախնդիրների վերաբերյալ ավագ դպրոցականների գիտելիքների, իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, դրանց նկատմամբ ակտիվ դրական վերաբերմունքի դրսևորմանը, բնապահպանական մշակույթի ձևավորմանը:

Հետազոտության հիմնախնդրի շրջանակներում առկա տեսական դրույթների և փորձարարական աշխատանքների վերլուծությունը թույլ տվեց ամելու հետևյալ **եզրակացությունները**.

1. Ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունը, մեթոդական հետազոտություններն ու մեթոդաբանական մոտեցումները՝ գրանցելով, որ էկոլոգիական կրթությունը համարվում է մարդու և հասարակության՝ շրջապատող բնական միջավայրի հետ փոխազդեցության, հասարակության և բնության ներդաշնակության հաստատման գործուն միջոց, որը մարդկության գոյատևման կարևոր պայման է, համաշխարհային էկոլոգիական ճգնաժամի հաղթահարման անվերապահ գործոն: Էկոլոգիական կրթության բաղադրիչ է համարվում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները:
2. Ներկայումս քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրներն առավել արդիական են դառնում, քանի որ քաղաքը ժամանակակից մարդկության և ապագա սերունդների հիմնական բնակավայրն է: Բուռն կերպով ծավալվող քաղաքակենտրոնացման, քաղաքաշինության գործընթացները հրամայաբար պահանջում է նաև այդ միջավայրի բնապահպանության ուսումնասիրում:
3. Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը՝ որպես էկոլոգիական կրթության համակարգի բաղադրիչ բխում է հասարակության կայուն զարգացման գերակայություններից և արտացոլում է մոլորակի մարդկության հիմնական բնակավայրի սոցիալ-բնական առանձնահատկությունները, մարդու և բնության ներդաշնակ փոխներգործության գերակա ուղղությունները, այդ միջավայրի անխաթար պահպանման ու էկոլոգիապես նպատակահարմար գործունեության իրականացման հոգեբանամակավարժական պայմանների ապահովման հիմնական մոտեցումները:
4. Հիմնավորվել են «Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրի մշակման հիմնական մոտեցումները՝ ելնելով քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներից ու առանձնահատկություններից, կայուն զարգացման խնդիրներից:
5. Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ու ուսումնասիրման՝ մեր կողմից մշակված դասընթացի ծրագիրը հնարավորություն է տալիս յուրացնելու ՀՀ քաղաքային բնակավայրերի պատմական զարգացման, էկոհամակարգերի ձևավորման , դրանց բազմազանության, բնության վրա մարդածին ներգործություն , կենսաբանական անվտանգության ապահովման, բնակչության առողջության և զենոֆոնդի պահպանման վերաբերյալ գիտելիքները և

կարող է կիրառվել ավագ դպրոցի բնագիտական հոսքում՝ որպես դպրոցական բաղադրիչի ընտրովի առարկա:

6. «Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացի ծրագրային նյութի ուսուցման մեթոդիկան ընդգրկում է ուսուցման ժամանակակից մեթոդները, տեխնոլոգիաները, ուսումնական գործունեության կազմակերպման ձևերը, որոնք ապահովում են հիմնախնդրի վերաբերյալ սովորողների գիտելիքների յուրացումը և համալրում, բնապահպանական, բնաճանաչողական, ուսումնահետազոտական կարողությունների և էկոլոգիական մշակույթի ձևավորումը:

Այսպիսով, կատարած աշխատանքի արդյունքում ապացուցել ենք, որ ավագ դպրոցի բնագիտական հոսքի դպրոցական բաղադրիչում անհրաժեշտ է ներառել «Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրներ» դասընթացը և այն իրացնել արդյունավետ դասավանդման մեթոդիկայի կիրառմամբ:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Թովմասյան Ա.Բ., «Քաղաքի էկոլոգիա» առարկայի հիմնական հասկացությունները և մեթոդաբանական մոտեցումները, Գյումրու Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի 75-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, 9-10 հոկտեմբերի 2009 թ. Գյումրի, «Դպիր» հրատ., էջ 349-354:

2. Թովմասյան Ա.Բ., Հանրակրթական դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանության ուսումնասիրման գիտատեսական հիմնավորումը, Կրթությունը և գիտությունը Արցախում, թիվ 1-2, 2011թ. էջ 28-33:

3. Թովմասյան Ա.Բ., Քաղաքային բնակավայրերի բնապահպանության ուսումնասիրման մանկավարժական և հոգեբանական հիմնավորումը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N10-12 (39), 2013, էջ 118-122:

ТОВМАСЯН АРМИНЕ КАДЖИКОВНА
Методика изучения природоохранных проблем
в городских поселениях в старшей школе

Автореферат на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – «Методика обучения и воспитания» (география).
Защита диссертации состоится 25-ого сентября 2014 года в 12.00 на заседании специализированного совета 020 ВАК (Высшая аттестационная комиссия) <<Педагогика>> по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им.Х.Абовяна по адресу : 0010,Ереван, ул. Тигран Меци, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В начале третьего тысячелетия планета стоит перед угрозой экологической катастрофы. С этой точки зрения в условиях непрерывно нарастающих глобальных экологических проблем актуализируется проблема сохранения биоразнообразия планеты земля. В этом контексте особо подчеркиваются природоохранные проблемы в городских поселениях, для решения которой особое место уделяется человеку. Человек – объект природы, в то же время человек – существо социальное, кто постоянно меняет окружающую среду в процессе своей жизнедеятельности. Эта деятельность часто влияет на взаимоотношения человек-природа, порой эти взаимоотношения оказываются безвозвратно потерянными, а сформированные проблемы охраны природы волнуют мировую общественность.

Эти процессы оказывают влияние также на систему образования, в частности, получение знаний в области природы и живых организмов, оценки экологических ситуаций, формировании знаний и умений охраны природы, ценностных ориентаций и, соответственно, гармоничного сосуществования с окружающей средой.

Актуальность исследования обусловлена теоретическим обоснованием и разработкой методики изучения природоохранных проблем в городских поселениях, основанной на сопоставлении личностно- эгоцентрического подхода и научного знания.

Цель исследования заключается в разработке и экспериментальном обосновании методики изучения природоохранных проблем в городских поселениях в естественнонаучном блоке старшей школы.

Объект исследования. Процесс изучения природоохранных проблем в городских поселениях в старшей школе.

Предмет исследования. Методика изучения природоохранных проблем в городских поселениях естественнонаучном блоке старшей школы.

Научная новизна исследования

- Раскрыта сущность основных понятий, имеющие отношение к природоохранным проблемам в городских поселениях: «защита городской природы», «экологическое мышление и культура», «городская экологическая культура», «планетарная гигиена», «социальная гигиена».
- Выявлены основные особенности природоохранных проблем городов РА:

- взаимосвязь региональных традиций городских жителей с окружающей средой,
- особенности климатических условий, экосистем, ландшафта города.
- характеристика урбанизации, городостроения, общей промышленности, транспорта города;
- разработана и экспериментально апробирована программа дисциплины «Природоохранные проблемы в городских поселениях» как курс по выбору в естественнонаучном блоке старшей школы;
- разработана методика изучения природоохранных проблем в городских поселениях;
- предложены педагогические условия изучения курса «Природоохранные проблемы в городских поселениях».

Теоретическая значимость исследования

- Разработаны и теоретически обоснованы методологические основы изучения природоохранных проблем в городских поселениях в старшей школе;
- теоретически обоснована необходимость изучения природоохранных проблем в городских поселениях, что продиктовано социально-экономическими, демографическими, культурными изменениями общества в новом тысячелетии;
- теоретически обоснованы педагогические условия изучения природоохранных проблем в городских поселениях в старшей школе в контексте организации учебно-исследовательской деятельности, профессиональном ориентировании школьников;
- материалы исследования обогатят теорию и практику экологического образования.

Практическая значимость исследования.

- Разработанная программа дисциплины «Природоохранные проблемы в городских поселениях» и методика ее изучения могут быть использованы в качестве курса по выбору в естественнонаучном блоке старшей школы;
- результаты исследования и учебные материалы могут быть применены в профессиональной подготовке и переподготовке учителей, тематических разработках и методических рекомендациях.

Достоверность и обоснованность исследования гарантируют анализ существующих в обучении естественных наук психолого-педагогические и методические литературы, комплексным анализом существующих концепций, научно-теоретической базой исследования, выбором соответствующих методов исследования целей, предметов и задач, экспериментальным обоснованием теоретических тезисов, систематическим анализом полученных данных научных исследований, обобщением, использованием результатов математическими и статистическими методами обработки этих данных, обоснованными выводами.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликованы три научных статьи.

TOVMASYAN ARMINE QAJIK
METHODS OF STUDY OF THE ECOLOGICAL PROBLEMS OF URBAN AREAS IN
HIGH SCHOOL

ԺԳ. 00.02. The Ph.D. dissertation for the degree of the candidate of pedagogical sciences with the specialization of "Education and Teaching Methods"

Thesis for getting a candidate degree in Pedagogical sciences, specialty 13.00.02- "Teaching and education methodology" (the geography).

The defense of the thesis will be held on September 25, 2014 at 12.00 P.M. at the meeting of the specialized council 020 HAC "Pedagogy" awarding scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh.Abovyan at the address: 17 Tigran Mets, Yerevan, 0010.

SUMMARY

The relevance of the research. The earth faces imminent ecological disaster at the beginning of the third millennium.

From this point of view under circumstances of continuous increase of global ecological issues, the objective of earth's biodiversity maintenance obtains sonority becoming the concern of all the humanity.

The environmental issues of the urban areas are specifically outlined, where the human has a unique role in the solution of those issues. The human is the object of the nature, as well as he is a social being, who constantly covers his surrounding world because of his activities. These activities usually result in the serious, even irreversibly disrupt of mutual connection between the nature; environmental issues have been developed, with international public endeavor addressed.

The educational systems cannot stay apart from this procedure, particularly in obtaining of knowledge on nature and living organisms, evaluation of ecological situations, development of environmental skills and competences and value system by the rising generation and, hence, in the terms of appointment of harmonic living mission together with the surrounding environment.

The modernity of the research is conditioned with the environmental issues of the urban areas as theoretical justification and methodology development of regional components of the general ecological education by combination of human ecocentric approach and natural science knowledge.

The aim of the research is to develop and justify, based on experience, the research methodology of environmental issues of urban areas in natural science stream at high school.

The object of the research is the research process of environmental issues of urban areas.

The subject of the research is the research methodology of environmental issues of urban areas in natural science stream at high school.

The scientific innovation of the research;

1. The main notions on environmental issues of urban areas have been specified. The peculiarities of RA environmental issues of urban areas have been identified.

2. “Environmental Issues of Urban Areas” subject program has been developed and justified on the basis of expertise at school program of natural science stream as a selective subject to study.

3. The research methodology of environmental issues of urban areas has been developed.

The theoretical importance of the research

1. The research necessity of environmental issues of urban areas has been theoretically justified, which derives from social-economic, demographic and cultural changes in the new millennium and reflect the main tendencies and priorities of the human development.

2. The research methodological basis of environmental issues of urban areas at high school has been identified and theoretically justified.

3. The pedagogical conditions of the environmental issues of urban areas at high school have been theoretically justified in the context of organization of pupils’ research activities and formulation of vocational orientation.

The practical importance of the research

1. The developed “Environmental issues of urban areas” school program and its research methodology can be used as a selective subject in natural science stream of high school.

2. The research outcomes and educational materials can be used for the professional training and quality increasing programs, thematic developments, various educational ecological programs and methodological assignments for the teachers.

The assertion and the basis of the research guarantee in the teaching field of the subjects of natural sciences psycho-pedagogical and methodical literature with the elaborated concepts of complex analysis, with the scientific base of the research, with the selected methods adequated to the aims, subjects and problems of the research, with the experimental basis of the theoretical propositions, with the systematic nature of the experiment, with the data analysis, with the generalization, with the use of the mathematical and statistical methods of their elaboration, with the grounded conclusions.

The structure and volume of the research submitted. The dissertation consists of the Introduction, three Chapters, Conclusions, References, Bibliography, Appendices, 3 Tables.